«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ածականի ուսուցումը միջին դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Հասմիկ Սարգսյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն.....3

Ածականի տեսակները կազմությունը……..7

Գործնական աշխատանք դասարնաում……13

Եզրակացություն……16

Գրականության ցանկ……18

Ներածություն

Հետազոտության աշխատանքի արդիականությունը: Ուսուցումը ոչ միայն գիտելիքների ձեռքբերման գործընթաց է, անձի զարգացման և դաստիարակության միջոց: Հանրակրթության գերխնդիրը այնպիսի շրջանավարտի ձևավորումն ու զարգացումն է, որը պատրաստ կլինի ապահովելու իր երկրի գիտատեխնիկական ու պատմամշակութային առաջընթացը, կկարողանա հայտնաբերել, ձևավորել ու զարգացնել և հասարակայնորեն արդյունավետ ու նպատակահարմար կերպով կիրառել իր բոլոր բարձրարժեք ընդունակություններն ու ձիրքերը, ստեղծագործական արժեքները և ստեղծարար ներուժը, խորը բովանդակություն հաղորդել իր օգտակար գործունեությանը՝ ծառայեցնելով ինչպես հայրենիքին, այնպես էլ սեփական բարօրությանը:

Ժամանակակից գիտության բազմազան ոլորտների, մշակութային կյանքի, ազգամիջյան, հասարակական-քաղաքական հարաբերությունների տարաբնույթ զարգացումներն ազդում են լեզվական համակարգի կատարելագործման գործընթացի վրա, թելադրում նրա բառային կազմի հարստացման անհրաժեշտություն: Այս հարցում կարևորվում է ածականի ուսուցման դերը, որովհետև ածականով են բնորոշվում իրերը, երևույթներն ու հարաբերությունները (բազմակողմանի, հումանիստական, խաղաղապաշտ, սպառազինային և այլն):

Միանշանակ կարող ենք ասել, որ պատկերավոր, դիպուկ, ճկուն ու դրական հույզերով օժտված հարուստ խոսքը մարդուն օգնում է կառուցողական հարաբերություններ ստեղծել թե՛ յուրայինների և թե՛ օտարների հետ, լուծել բազմաթիվ հիմնախնդիրներ, պաշտպանել իր և իր միջավայրի շահերը, հիմնավորել սեփական դիրքորոշումները, բանակցություններին հաղորդել դրական ելքեր ակնկալող լիցք:

Այս հայտարարությունների շրջանակով էլ պայմանավորված է հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նյութ դարձնելով ածականի իմաստաքերականական հատկանիշների ուսումնասիրումը միջին դպրոցում՝ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման ճանապարհով մշակել թեմայի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական ամբողջական համակարգ, որի կիրառումը կնպաստի ածական խոսքի մասի գործնական յուրացմանը, նյութի գիտակցական, առավել տրամաբանված ըմբռնմանը, սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը,

բառապաշարի՝ ածականներով հարստացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների մշակմանը:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցի սովորողների կողմից ածական անվան ըմբռնման, բազմաբնույթ մտածողության ձևավորման, բառապաշարի հարստացման գործում ունեցած նրա դերի գիտակցման, իմաստավորման և գնահատման համակարգն է: Հետազոտության առարկան ածական անվան բառաքերականական կարգերի ուսուցման գործընթացն է միջին դպրոցում:

Հետազոտության գիտական վարկածը այն է, որ եթե՝- որոշակիացվեն ածականի ուսումնասիրման ինչպես առարկայական, այնպես էլ հայեցակարգային մոտեցումները, գիտականորեն մշակվեն և գործադրվեն հայոց լեզվից աշակերտների գիտելիքները, հաղթահարվեն ուսուցման ավանդական գործընթացի կարծրատիպերը, ածականի ուսումնասիրման գործընթացը կազմակերպվի փոխներգործուն մեթոդներով, խարսխվի գործնականի վրա և կրի շարունակական բնույթ, ածականի ուսումնասիրման ընթացքում սովորողների բառապաշարի հարստացումն ու խոսքի զարգացումը դառնա գերխնդիր, և այդ միտումով ներդրվեն նոր տեխնոլոգիաներ իրենց նշանակետային դրույթների, մեթոդական խմբերի ուսուցման տեխնոլոգիական ու տեղեկատվական համապատասխան միջոցների միասնությամբ, ապա հնարավոր կդառնա ածականի արդյունավետ ուսուցումը ոչ միայն ընդհանրապես՝ որպես ուսումնական առարկայի առանձին թեմա, այլև կհարստանա սովորողների բառապաշարը, կզարգանա նրանց գրավոր ու բանավոր խոսքը՝ ապահովելով ոչ միայն հանրակրթական մյուս առարկաների յուրացումը, այլև հասարակական կյանքին գիտակցական ակտիվությամբ մասնակցությունը, միջանձնային գործարար հարաբերությունների ձևավորումը:

Հետազոտության հիմնական նպատակի և վարկածի համաձայն առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

1. բացահայտել ածականների տեղն ու դերը միջին դասարանների աշակերտների խոսքում,
2. մշակել և փորձարկել ուսուցման նոր եղանակներ՝ որոշելու ածականի դերը տարբեր խոսքի մասերի համակարգում,
3. բացահայտել ածականի շարունակական ուսուցման փուլերը լեզվի տարբեր բաժիններն անցնելիս,

4. փորձարկել և դասակարգել ածականի ուսուցման այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք կնպաստեն այդ խոսքի մասի յուրացման գործընթացում սովորողների բառապաշարի հարստացմանը, բանավոր ու գրավոր խոսքի զարգացմանը,

5. սահմանել ածականի գործածությամբ կապակցված խոսք կառուցելու քայլերը՝ բառ-բառակապակցություն-նախադասություն-կապակցված խոսք շղթայում,

6. մշակել և փորձարկել թեմայի յուրացման արդյունավետությանը նպաստող վարժությունների համակարգ,

Հետազոտության մեթոդաբանական հիմքը բխում է հայոց լեզվի քերականության և լեզվական կարողությունների ուսուցման այն սկզբունքային դրույթից, որի համաձայն դպրոցում լեզվի ուսուցումը դառնում է տեսականի և գործնականի վրա հիմնված կառուցողական գործընթաց:

Մեր առջև դրված խնդիրների լուծման համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել անցյալի և ներկայի առաջատար մանկավարժագետների (Յա. Կոմենսկի, Յու. Բաբանսկի, Ի. Վ. Լերներ, Ա. Բահաթրյան, Յու. Ամիրջանյան, Ա. Տեր-Գրիգորյան, Ջ. Գյուլամիրյան), հոգեբանների (Լ. Վիգոտսկի, Մ. Մազմանյան, Ա. Նալչաջյան), լեզվաբանների, հայոց լեզվի մեթոդիստների (Մ. Աբեղյան, Ս. Աբրահամյան, Գ. Ջահուկյան, Հ. Բարսեղյան, Ա. Ղարիբյան, Ս. Գյուլբուդաղյան) աշխատությունները, դիտարկվող քերականական երևույթի վերաբերյալ լեզվաբանության մեջ գոյություն ունեցող ընդունելի տեսակետները, ինչպես նաև հայոց լեզվի դասագրքերը (Ֆ. Խլղաթյան և Լ. Խաչատրյան, Հովհ. Բարսեղյան և Փ. Մեյթիխանյան), ծրագրերն ու չափորոշիչները, հայոց լեզվի առարկայական և ուսուցման ավանդական հայեցակարգը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության մեթոդներն ընտրվել են մեր առջև դրված նպատակին, խնդիրներին ու գիտական վարկածին համապատասխան:

1. Էմպիրիկ մեթոդներ.

ա) դիտում, որի շնորհիվ կուտակվել են տվյալներ և փաստեր, որոնք հիմք են հանդիսացել միջին դպրոցի սովորողի գիտելիքներն ինքնուրույն ճանապարհով ձեռք բերելու, բանավոր ու գրավոր խոսքը զարգացնելու համար,

բ) անկետավորում, որի միջոցով բացահայտել ենք գիտափորձի մասնակցած յուրաքանչյուր դեռահասի տարիքը, հոգեբանությունը, մտածողության տեսակները, անհատական առանձնահատկությունները, ուսուցիչների անձնային և մասնագիտական որակները, պարզել

ածականի ուսուցման ընթացքում խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման՝ նրանց կարողությունները,

գ) մանկավարժական գիտափորձ, որի միջոցով բացահայտել ենք և հիմնավորել ածականի ուսուցման ընթացքում մեր կողմից կիրառվող տեխնոլոգիաների հրատապությունը, արդյունավետությունն ու անհրաժեշտությունը:

Ածականի տեսակները կազմությունը

Ածական անունը խոսքի մաս է, որն ընդգրկում է առարկայի կայուն, ոչ անցողիկ հատկանիշ անվանող բառերը[1]: Ածականները առարկայի հատկանիշն արտահայտում են անմիջականորեն (մեծ, գեղեցիկ, պարտաճանաչ, փայլուն, կարմիր, հմայիչ, թուխ) կամ այլ առարկայի հարաբերությամբ միջնորդավորված (մայրական, լեռնային, փայտե, թիթեղյա, գյուղական, մայիսյան, հայրենի, գարնանային, աշակերտական): Եթե տունը **մեծ** է, ծաղիկը՝ ***կարմիր*** , սեղանը՝ ***փայտե*** , ապա ***մեծ, կարմիր, փայտե*** հատկանիշներն ուղեկցում են ***տուն, սեղան***, առարկաներին նրանց ողջ գոյության ընթացքում, իսկ ***կարմրող ծաղիկ, ջարդված սեղան, քանդված տուն*** կապակցություններում ***կարմրող, ջարդված, քանդված*** բառերի արտահայտած հատկանիշներն անցողիկ են՝ գործընթացի արդյունք. ծաղիկը սկզբում կարմիր չէր, հիմա է կարմրում, սեղանը ջարդված է հիմա, իսկ նախկինում՝ ոչ, ջարդել գործողության հետևանքով, տունը քանդված է դարձյալ քանդվելու գործողության հետևանքով: Ուստի, ***մեծ, կարմիր, փայտե*** բառերը ածականներ են, իսկ ***կարմրող, ջարդված, քանդված*** բառերը՝ ոչ:

Իր բուն խոսքիմասային իմաստով գործածվելիս ածականը քերականորեն փոփոխությունների չի ենթարկվում՝ չի հոլավվում, հոգնակի չի դառնում և միշտ ձգտելով դեպի գոյականը և նրա հետ կապակցվելով՝ միաժամանակ վերջինիս քերականական ձևերի հետ չի համաձայնում. *կարմիր ծաղիկ, կարմիր ծաղկի, կարմիր ծաղիկներ, կարմիր ծաղիկները:* Նախադասության մեջ ածականն ունի իրեն հատուկ շարահյուսական գործառույթներ՝

1. **Որոշիչ**–***Խաղաղ*** գիշերով դու կգաս ինձ մոտ, ***Քնքուշ*** ձեռքերդ ես կհամբուրեմ…(ՎՏ):

---

[1]Տե՛ս Խաչատրյան Ս. Ռ., Ածականի ուսուցման առաջին դասը, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 3(6), Երևան, 2007, էջ 25-32:

2. **Ստորոգելի**-Նա այնքան ***բարի էր*** դեպի բոլորը, շնչավորն ու անշունչը, որ նրա ձիու սմբակները չէին պղտորում աղբյուրների ադամանդը, չէին տրորում քնքուշ ծաղիկները (ԱԻ):
3. **Զնի պարագա**-Եվ ժպտում ես ինձ, ակնարկում ***քնքուշ***, Եվ շշնջում ես, և շրշում ***անուշ*** (ՎՏ):

Ածականը գործածվում է փոխանվանաբար. ստանում է որոշիչ հոդ, հոլովվում գոյականաբար (մեծը – մեծի – մեծին - մեծը (մեծին) –մեծից – մեծով - մեծում) և կատարում է գոյականին հատուկ պաշտոններ: Փոխանուն ածականով արտահայտված որոշիչը ներառում է նաև որոշյալի իմաստը. Բայց ***ամենաշքեղը*** աղջկա աչքերն էին, որոնք, սակայն, այժմ սարսափից այնպես էին լայնացել ու խոշորացել, որ թվում էր, թե աշխարհում չկա էլ ***ավելի գեղեցիկը*** (ՀՂ):

Այսպիսով՝ ածականի հիմնական հիմքը ***հատկանիշն է:***

Ածականները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով[2]:

1. Ածականների ***բառական*** իմաստների հիման վրա կարելի է առանձնացնել ***բառական-իմաստային*** հետևյալ խմբերը.

- գույն արտահայտող՝ ***սպիտակ, կարմիր, սև, գորշ*** և այլն.
- ձևաչափային հատկություն արտահայտող, որոնք սովորաբար հատկանշային զույգեր են կազմում. ***բարձր - ցածր, երկար - կարճ, լայն - նեղ*** և այլն:
- գնահատողական հատկանիշ արտահայտող. *լավ - վատ, հաճելի - տհաճ, հիանալի* և այլն:
- հուզական իմաստ արտահայտող. ***զարշելի, զզվելի, արգահատելի*** և այլն:
- համ ու հոտ արտահայտող. ***համով, անհամ, ախորժելի, քաղցր, դառն*** և այլն:
- մարդկանց և կենդանիների արտաքին հատկանիշներ արտահայտող. ***բարձրահասակ, գեր, նիհար*** և այլն:
- մարդկանց և կենդանիների ներքին հոգեկան հատկություններ արտահայտող. ***տխուր, ուրախ, ժիր, կայտառ*** և այլն:

2. ***Կապակցելիությամբ*** կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

- միայն մեկ խոսքի մասի (գոյականի) հետ կապակցվող (լրացնող)- ***աշակերտական, երեկոյան, երևանյան, աշնանային.***

---

[2] Տե՛ս . Խաչատրյան Ս. Ռ., Ածականական դերանունների ուսուցումը, «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), N 1(34), Երևան, 2008, էջ 52-59:

- մեկից ավելի խոսքի մասերի հետ կապակցվող – լավ (մարդ), լավ (խոսել), բարձր (սար), բարձր (գոռալ), անհանգիստ (մարդ), անհանգիստ (քնել) և այլն:

3. ***Ըստ հատկանիշի ուժգնության, սաստկության աստիճանի***. *թույլ, նվազ, տկար, ուժեղ, մեծագույն, բաւձրաբերձ, ահռելի, ամայի, հսկայական* և այն:

Սակայն նման դասակարգումները չեն ընդգրկվում ածական խոսքի մասի ողջ բառակազմը: Համընդգրկուն բաժանումը որակական և հարաբերական տեսակների, որը կատարվում է բառերի իմաստաբանական և ձևաբանական հատկանիշների հիման վրա[3]:

Սակայն այս տեսակների տարբերակման հիմքի հարցում էլ կան տարակարծություններ: Ամենատարածված և պարզ տեսակետը հիմնված է ածականի փոփոխելի կամ ոչ փոփոխելի լինելու վրա: Փոփոխելի հատկանիշ արտահայտող ածականները համարվում են ***որակական:*** Դրան հակառակ՝ ***հարաբերական*** ածականներն էլ արտահայտում են ոչ փոփոխելի հատկանիշ: Ածականները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով:

1. Ածականների բառական իմաստների հիման վրա կարելի է առանձնացնել բառական-իմաստային հետևյալ խմբերը.

ա. գույն արտահայտող՝ սպիտակ, կարմիր, սև, գորշ և այլն.

բ. ձևաչափային հատկություն արտահայտող, որոնք սովորաբար հատկանշային զույգեր են կազմում. բարձր - ցածր, երկար - կարճ, լայն - նեղ և այլն:

գ. գնահատողական հատկանիշ արտահայտող. լավ - վատ, հաճելի - տհաճ, հիանալի և այլն:

դ. հուզական իմաստ արտահայտող. գարշելի, զզվելի, արգահատելի և այլն:

ե. համ ու հոտ արտահայտող. համով, անհամ, ախորժելի, քաղցր, դառն և այլն:

զ. մարդկանց և կենդանիների արտաքին հատկանիշներ արտահայտող. բարձրահասակ, գեր, նիհար և այլն:

է. մարդկանց և կենդանիների ներքին հոգեկան հատկություններ արտահայտող. տխուր, ուրախ, ժիր, կայտառ և այլն:

2. Կապակցելիությամբ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը[4].

---

[3] Խաչատրյան Ս. Ռ., Գոյական//ածական տարարժեք բառերի ուսուցումը միջին դպրոցում, «Մանկավարժական միտք» հանդես, N 4, Երևան, 2008, էջ 140-148:

[4] Տե՛ս Խաչատրյան Ս. Ռ., Ածական//մակբայ տարարժեք բառերի ուսուցումը, «Հայագիտական հանդես», N 2-3(8-9), Երևան, 2008, էջ 48-57:

ա. միայն մեկ խոսքի մասի (գոյականի) հետ կապակցվող (լրացնող)- աշակերտական, երեկոյան, երևանյան, աշնանային.

բ. մեկից ավելի խոսքի մասերի հետ կապակցվող – լավ (մարդ), լավ (խոսել), բարձր (սար), բարձր (գոռալ), անհանգիստ (մարդ), անհանգիստ (քնել) և այլն:

3. Ըստ հատկանիշի ուժգնության, սաստկության աստիճանի. թույլ, նվազ, տկար, ուժեղ, մեծագույն, բաւձրաբերձ, ահռելի, ամայի, հսկայական և այն:

Սակայն նման դասակարգումները չեն ընդգրկվում ածական խոսքի մասի ողջ բառակազմը: Համընդգրկուն բաժանումը որակական և հարաբերական տեսակների, որը կատարվում է բառերի իմաստաբանական և ձևաբանական հատկանիշների հիման վրա:

Սակայն այս տեսակների տարբերակման հիմքի հարցում էլ կան տարակարծություններ: Ամենատարածված և պարզ տեսակետը հիմնված է ածականի փոփոխելի կամ ոչ փոփոխելի լինելու վրա: Փոփոխելի հատկանիշ արտահայտող ածականները համարվում են որակական: Դրան հակառակ՝ հարաբերական ածականերն էլ արտահայտում են ոչ փոփոխելի հատկանիշ:

Որակական և հարաբերական ածականների տարբերակումը

Ածականների երկու տեսակները միայն մեկ հիմունքով տարբերակելը թերի է: Պետք է հաշվի առնել մի շարք գործոններ[5].

1. Որակական ածականները առարկայի հատկանիշը դրսևորում են անմիջականորեն, հարաբերականները՝ միջնորդավորված:
2. Որակական ածականները ցույց են տալիս ***համեմատելի հատկանիշներ*** և որպես դրա հետևանք՝ ունենում են համեմատության աստիճաններ (մեծ - ավելի մեծ - ամենամեծ, մեծագույն, գեղեցիկ - ավելի գեղեցիկ - ամենագեղեցիկ, բարձր- ավելի բարձր, ամենաբարձր, բարձրագույն, շատ բարձր և այլն), իսկ հարաբերականները զուրկ են դրանից:
3. Որակական ածականները կազմությամբ կարող են լինել և՛ պարզ (լավ, մեծ սիրուն), և՛ բաղադրյալ (մեծամիտ, առատաձեռն, հոտավետ, շքեղ), իսկ հարաբերականները միշտ բաղադրյալ են, առավելապես՝ ածանցավոր (ընկերական, մետաքսյա, կամարաձև, մարդանման, կիրակնօրյա, տարեվերջյան):

---

[5] Խաչատրյան Ս. Ռ., Ածականի տեսակների ուսուցումը հիմնական դպրոցում, «Լեզու և կրթություն 3» Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Երևան, 2012, էջ 100-106:

4. Որակական ածականները կարող են հոլովվել, գործածվել գոյականաբար (խելոքը, բարին, փոքրիկից) և կատարել գոյականին հատուկ շարահյուսական դեր. (Հեքիաթներում ***բարին*** միշտ հաղթում է):
5. Որակական ածականները կարող են ունենալ հականիշներ (լավ-վատ, բարձր-ցածր, երկար-կարճ, մեծ-փոքր, քաջ - վախկոտ, գեղեցիկ - տգեղ), իսկ հարաբերականները՝ ոչ:
6. Որակական ածականներից կարելի է կազմել ա) ***նվազական – փոքրացուցիչ, փաղաքշական և սաստկական*** իմաստ արտահայտող ձևեր (բարձր- բարձրիկ, ցածր-ցածրիկ, կլոր-կլորիկ, քաղցր-քաղցրիկ, խոր-խորին) բ) ***վերացական գոյականներ*** (ազնիվ-ազնվություն, մեծ-մեծություն, քաջ-քաջություն), գ) ***կրկնավորներ բարդություններ*** (մեծ-մեծ, երկար-երկար, անուշ-անուշ, խեղճ-խեղճ, սուր-սուր), դ) որոշ որակական ածականներից ածանցների միջոցով կազմվում են ***մակբայներ*** (անշեղ-անշեղորեն, համառ-համառորեն, համեստ-համեստաբար, քաջ-քաջաբար), ե) ***բայեր*** (դեղին-դեղնել, ուժեղ-ուժեղանալ, մեծ-մեծանալ, վախ-վախենալ),
7. Որակական ածականները բացի գոյականներից կարող են կապակցվել նաև բայերի հետ, ցույց տալ ***գործողության հատկանիշ***, ինչպես մակբայները. ***Բարձր խոսել, կարճ կապել, լավ աշխատել, քաջ գիտակցել, հիանալի նկարել*** և այլն:

Հարաբերական ածականները չունեն նշված հատկանիշները:

Որոշ հարաբերական ածականներ կարող են փոխարինվել՝

ա) ***գոյականի սեռական կամ բացառական հոլովաձևերով*** (երկաթե-երկաթից, բրդյա-բրդից, գյուղական- գյուղի, միջնադարյան-միջնադարի),

բ) ***բառակապակցությամբ*** (աշակերտական- աշակերտին վերաբերող, քարաշեն- քարից շինված, ծաղկահյուս- ծաղկից հյուսված):

Հարաբերական ածականներ կազմող ***–ական, -վոր, -յան, -յա, - ե*** ածանցներով կազմված մի շարք բառեր համատեղում են որակականի և հարաբերականի իմաստներ կամ ուղղակի վերածվել են որակականի և կարող են ունենալ համեմատության աստիճաններ:

Այդ կարգի բառերից են՝ բարոյական, գործնական, էական, նվիրական, օրինական, վճռական, ժողովրդական, մակերեսային, հրեշային, տաղանդավոր, վտանգավոր, խորհրդավոր, լուսավոր, ձյունե, լուսե, հնամյա, հնադարյան, առօրյա և այլն (սակայն ոչ բոլորն են համեմատության աստիճան ընդունում):

Հեղինե՛, չես անդրադարձել այն որակական ածականներին, որոնք համեմատության աստիճան չունեն: Ածականն ինչպե՞ս տարբերել մակբայից, ածականներ, որոնք միաժամանակ մակբայ են:

Գործնական աշխատանք դասարնաում

1. Դո՛ւրս գրել ածականները. դրանցից երեքը գործածե՛լ նախադասություններում:

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը[6]: Հեռվից ավերակներ չեն երևում և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: Ո՛չ մի երկաթյա դուռ և ո՛չ մի պահակ աշտարակի գլխին:

Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հոկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները: Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ:

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

Ներքևը, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա, թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ: Շոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական

---

[6] Ակսել Բակունց «Ալպիական Մանուշակ»

հորանջում է տան ստվերում, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփրում գլխով անցածը։

Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են։ Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողությունը։ Գետն աղմկում է առաջվա հանգով, նույն քարերն են և նույն քարե արծիվը։

Քանի՞ սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցեխերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այծ ու ոչխարը քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր։

Գտնե՛լ այն ածականները, որոնց գերադրական աստիճանը

–գույն մասնիկով չի կազմվում։

Բարձր-, մեծ, **տաք**, նվազ, **թանկ**, լավ, ուժեղ, ազնիվ, **զվարթ**, խոշոր, հին,

բարակ, **կոշտ**, **ուրախ,** նոր, **քաղցր**։

***Գրե՛լ տրված գոյականներից յուրաքանչյուրին բնորոշող**

երեք ածական։

Նկար- նոր նկարը, գեղեցիկ նկարը, փայլուն նկար , այգի-

մեծ այգին, խնամված այգին,խոշոր այգին , ծաղիկ-

պզտիկ ծաղիկ, գունավոր ծաղիկ, հետավետ ծաղիկ , գիրք-

հաստ գիրք, հին գիրք, լավ գիրք, գորգ-ազգային գորգ, հայկական գորգ,ծաղկանկար գորգ ։

***Գտնե՛լ որակական ածականները. կազմե՛լ նախադասություններ՝**

գործածելով դրանք։

Բարձր- բարձր աշտարակ, մարմնագույն, աշակերտական, ամուրի, **թունդ-** , լեռնային, բրդյա,

պղտոր, **տխուր**, վճարովի, **ցածր-** ցածր կոշիկ, **դեղին-** դեղին ծաղիկ, **ժլատ**, նարնջագույն-

ջրալի- ջրալի ջրամբար, դաշտային– , թավշյա– թավշյա անորակ, ասվե, **ուրախ-**

ուրախ երեխա, **քաղցր-** քաղցր տորդ, **անվճար-** անվճար մուտք։

Գտնե՛լ ածականները։

Աղոտ– աղոտ լույս, դերձակ , դժվարին-

ճակատագիր, **հոգատար ծնող**, **մ**անրահատակ, կավ, հաճարենի,

հյուսնություն, լսարան, հանգամանորեն, երկաթ , **պողպատե**, սնահավատ, դետալ,

գործունյա, բարեգութ, **դաժան**, ատլաս, չիթ, **փայտե**, կաղապար, շրջանակ, **թղթե**։

Եզրակացություն

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Որպեսզի ածականի ուսուցումը նպաստի աշակերտների բառապաշարի հարստացմանը, խոսքի զարգացմանը և պատկերավոր մտածողությանը, այն պետք է իրականացնել ինդուկտիվ և դեդուկտիվ եղանակներով:

2. Ածական անվան ուսումնասիրումը ձևավորում է գոյական-ածական բառակապակցությունների միջոցով կապակցված խոսք կազմելու կարողություն, ունակություն ու հմտություն, ապահովում է անկաշկանդ հաղորդակցվելու, սեփական հույզերն արտահայտելու կարողություն, հետևաբար նաև՝ միջանձնային հարաբերություններ ստեղծելու հնարավորություններ:

3. Ածականի տեսակների, աստիճանակազմության և ձևակազմության գիտակցական յուրացումը խորացնում է ոչ միայն սովորողների տեսական գիտելիքները, այլև բացահայտում է բառակազմության բազմատեսակ դրսևորումները հայերենի բառակազմության միջակա մակարդակում:

4. Ածականի ձևաբանական տարարժեքության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս գիտակցելու ածականի խոսքիմասային առնչությունները հարաբերակից խոսքի մասերի՝ գոյականի և մակբայի հետ՝ նպաստելով խոսքում այդ կարգի բառերի ճիշտ արժևորմանը, որի արդյունքում աշակերտները յուրացնում են նաև տեսական հարցեր. Ածականների ձևաբանական արժեքի բաշխումը կատարվում է նաև շարահյուսական մակարդակում:

5. Ածականի գործառույթների ուսուցումը նպաստում է գեղարվեստական խոսք կառուցելու օրինաչափությունների յուրացմանը, ցույց տալիս նրա պաշտոնակրությունը շարահյուսական մակարդակում:

6. Ածականի յուրացման մակարդակի ստուգմանն ուղղված գիտափորձը հաստատում է առաջարկվող սկզբունքների հավաստիությունն ու դրանց գործադրման արդյունավետությունը:

7. Ածականի, մասնավորապես ածական+գոյական բառակապակցությունների ուսուցմամբ բացահայտվում է լեզվական համակարգի վերացարկվածության աստիճանը. լեզվում

արձանագրված ածականները և գոյականները արտացոլում են բնության մեջ ինքնին գոյություն ունեցող առարկաների և դրանց հատկանիշների կապերը:

8. Ածականի, նրա հատկանիշների ուսուցմանն ուղղված վարժությունների համակարգն իր տարատեսակ դրսևորումներով կարող է նպաստել այդ խոսքի մասի համակողմանի ուսուցմանը, օգնել նրա յուրացման գործընթացին և նյութ մատուցել հանրակրթության եռաստիճան համակարգում ածականի ուսուցման մեթոդական ձեռնարկներին:

9. Ածականի ուսուցման արդյունավետությունն ապացուցվել է արձանագրող գիտափորձով, որին նպաստել են դիտումը, զուգադրումը, գործնական աշխատանքների վերլուծությունները, համեմատությունն ու համադրությունը, ստացված արդյունքների մշակումը, ակտիվացնող և փոխներգործող մեթոդները, համագործակցային ուսուցումը և այլն:

Գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս. Ռ., Ածականի ուսուցման առաջին դասը, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 3(6), Երևան, 2007, էջ 25-32:

2. Խաչատրյան Ս. Ռ., Ածականական դերանունների ուսուցումը, «Կանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), N 1(34), Երևան, 2008, էջ 52-59:

3. Խաչատրյան Ս. Ռ., Գոյական//ածական տարարժեք բառերի ուսուցումը միջին դպրոցում, «Մանկավարժական միտք» հանդես, N 4, Երևան, 2008, էջ 140-148:

4. Խաչատրյան Ս. Ռ., Ածական//մակբայ տարարժեք բառերի ուսուցումը, «Հայագիտական հանդես», N 2-3(8-9), Երևան, 2008, էջ 48-57:

5. Խաչատրյան Ս. Ռ., Ածականի տեսակների ուսուցումը հիմնական դպրոցում, «Լեզու և կրթություն 3» Հավելված «Մանկավարժական միտք» հանդեսի, Երևան, 2012, էջ 100-106: